ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Դիվանի ներկա հատորն ամփոփում է հայ և ադրբեջանական գիտնականներից կազմված արձանագրագիտական հատուկ գիտարշավի 1960—1964 թթ. աշխատանքների արդյունքները:

1960 թ. Հայաստանի և Ադրբեջանի գիտությունների ակադեմիաների համաձայնությամբ անհրաժեշտ համարվեց երկու հանրապետությունների տարածքների վրա սփռված և երկու ժողովուրդների պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեցող հայերեն և արաբատառ արձանագրությունների հավաքելն ու հրատարակելը: Փոխադարձ համաձայնությամբ Հայաստանի ԳԱ հնագիտության ու ազգագրության և Ադրբեջանի ԳԱ պատմության ինստիտուտների միացյալ արշավախումբն իր աշխատանքները սկսեց պատմական Արցախ նահանգից (Լեռնային Ղարաբաղ):

Գիտարշավի մասնակիցները 1960 թ. օգոստոսի կեսերին ժամանեցին Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Մարտակերտի շրջանը: Գիտարշավի ընդհանուր ղեկավարն է եղել տողերիս գրողը, իսկ ադրբեջանական խմբի ղեկավարը՝ արաբատառ արձանագրությունների մասնագետ Մ. Խ. Նեյմատովան: Գիտարշավին մասնակցել են նաև Գ. Կարախանյանը, Գ. Գրիգորյանը, Ս. Ավագյանը, Արտաշես Վրույրը, Յուս. Յուսիֆովը, Ա. Գուլիևը, Հ. Ջիդդին, Սուլեյմանովը: Թե՛ Ադրբեջանական ՍՍՀ-ում և թե՛ Հայկական ՍՍՀ-ում միացյալ արշավախումբը գործել է համատեղ, սակավ դեպքերում առանձնացնելով հետախուզական ջոկատներ՝ մեկ-երկու օրով: Աշխատանքների ընթացքում ադրբեջանցի մասնագետները զբաղվել են արաբատառ արձանագրությունների ուսումնասիրությամբ, իսկ հայ մասնագետները՝ հայկական արձանագրություններով: Արցախում եղած արձանագրությունների ուսումնասիրությունը տևեց 4 տարի՝ 1960—1964 թթ., յուրաքանչյուր տարին մեկից երկու ամիս տևողությամբ: Բոլոր եղած արձանագրությունները տեղում վերծանվել են, գծագրվել, լուսանկարվել և անհրաժեշտության դեպքում նաև էստամպաժանվել:

Ամեն տարի աշխատանքների արդյունքների մասին հաշվետու զեկուցումներ են կարդացվել թե՛ Երևանում և թե՛ Բաքվում՝ համապատասխան ինստիտուտների գիտական խորհուրդների նիստերում: Ներկա պրակում ամփոփված են 1071 հայերեն արձանագրություններ, որոնք վերաբերում են IX—XVIII դարերին: